

ՄԵԼԻԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվամբ 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлиси, Редакция «Мелік».
Tiflis, Rédaction «Mschak».
Տէլեֆոն № 258.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ առաւօրեայ օրերէն).

Յայտարարութիւնը ընդունվում է ամէն լիցուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
խաւով 10 կոպեկով.
Տէլեֆոն № 258.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՆԻՆԻ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆԱՐԸ

Արանով յայտնում է ի գիտութիւն ընդհանուր, որ կիրակի, ներկայ նոյեմբերի 10-ին
Արեւմտահայաստանի գիւղերական տաճարում, ցերեկվայ 12 ժամին, կը կատարվի հոգե-
հանգիստ այն հանգուցեալ զինուորական համար, որոնք մասնակցել են վերջին Ռուս-
թուրքական պատերազմում, եւ վաճառք տաճարում, ցերեկվայ 1 ժամին կուսա Լորիս-Մէ-
լիքով, Լազարով, Տէր-Լուկասով, Ալիսագով եւ Շեխոյեւիով գեներալների համար, որոնք
թաղված են այդ տաճարի դաշտում:

1—1

Շուշանիկ Եւանգելիան իր դաւանքների հետ խորին ցաւով յայտնում է ազգական-
ներին եւ ծանօթներին իր սիրելի ամուսնու:

ՄԻԲՆՅԵԼ ԲՈՒՂԴԱՆՆԵՆ ԵՒՆԵՐՈՒԼՆԵՆԻ

մահը, Հոգեհանգիստ տեղի կունենայ ուրախ եւ շարաք երեկոյան ժամի 6-ին, հան-
գուցեալի բնակարանում (Судебная ул., № 34, д. Мирзоева), իսկ յուզարկատու-
թիւնը գէպի Մոզնու. Գէորգ Եկեղեցին—կիրակի, ժամը 10-ին:

2—2

ԲՈՒՂԱՆԴԱՆՈՒԹԻՒՆ

Հիմնարկութիւնների պահպանումը. —ՆԵՐՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Երեւանի քաղաքային ընտրու-
թիւնները. Գոր. սինդիկատների գէմ. նախակ
Շիրակից. Նախակ խմբագրութեան. Ներքին լու-
րեր. —ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արաքսի լու-
րեր. —ՀԵՌԱՅԻՆՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
ՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մի առաջարկութեան
առթիւով.

ՀԻՄՆԱԳԻՐԻ ԹԻՖԼԻՍԻՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆԱՐԸ

Մի ժողովուրդ, որ չունի հասարակա-
կան հիմնարկութիւնների մի ամբողջ ցանց
եւ չէ կարողանում եղածները պահպանել,
ցոյց է տալիս իր կուլտուրական անպատ-
րաստակութիւնը կամ անընդունակու-
թիւնը: Մարդիկ, ոգևորված բաց են ա-
նում դպրոց, գրադարան, բարեգործական
ընկերութիւն, արհեստանոց, որբանոց,
հիւանդանոց եւ դրանց նման հիմնարկու-
թիւններ, սկզբում յաճախում են այդ հիմ-

նարկութիւնները, հոգում են նրանց նիւ-
թական ապահովութեան եւ բարոյական
բարգաւաճման մասին, սակայն անցնում
է մի քանի ժամանակ եւ ահա մենք ախ-
նառեալ ենք լինում, թէ ինչպէս նոյն մար-
դիկը ստանում են դէպի գործը, սկսում
են կամ մոռացութեան տալ բարի նպա-
տակը, կամ յարուցանելով մի շարք անձ-
նական եւ ուրիշ խնդիրներ, հեռանում են
ասպարէզից, զանցառութեան տալով ի-
րանց խոտուածները եւ պարտաւորութիւն-
ները հիմնարկութիւնների վերաբերու-
թեամբ:

Մենք կարող ենք անուններ տալ եւ
յիշել, թէ ինչ հիմնարկութիւններ մեր
երկրում բաւարար վիճակի մէջ են
գտնվում. սակայն իրականութիւնը այն-
քան տխուր է եւ լաւ դրութեան մէջ
գտնվող հիմնարկութիւնների թիւը այն-
քան քիչ է, որ ինչպէս այդպիսիները բա-
ցառութիւն են կարողանում ընդհանուր
մէջ: Փակվում են գրադարաններ, ընթեր-

ցաւաններ, դպրոցներ, արհեստանոցներ,
ընկերութիւններ—միայն շնորհիւ այն բա-
նի, որ չը կան բաւականաչափ եռանդոտ
մարդիկ նրանց վարչական մարմինների մէջ
եւ չը կայ համակրութիւն ու աջակցու-
թիւն շրջապատող հասարակութեան մէջ:
Իսկ առանց հիմնարկութիւնների ան-
կարելի է ունենալ լուրջ կուլտուրական
առաջադրութիւն: Եթէ մարդիկ այսօր,
գրաւված մի կարեւոր հասարակական երե-
ւոյթից, մի նոր յարուցված էական խնդ-
րից, ցոյց են տալիս առանձին հետաքրք-
րութիւն եւ ոգևորութիւն, եթէ նրանք
այսօր համոզվել են, որ պէտք է հասարա-
կութեանը տալ այս կամ այն հիմնարկու-
թիւնը, անհրաժեշտ է, որ այդ ոգևորու-
թիւնը, հետաքրքրութիւնը եւ համոզ-
մունքը միայն կարճատեւ մի յուզմունքի
ուղաւորութիւն չը կրեն, այլ արմատ
բռնեն հասարակական կեանքի մէջ եւ ա-
ւելացնեն կրթական ու կուլտուրական
գործունեւի թիւը ազգայնականութեան մէջ:
Մեր մէջ արդէն սովորութեան է ընդ-
հանուր երեւոյթի կերպարանը է ստացել
բոլորական ոգևորութիւնը եւ անուհետ
կուլտուրական անընդունակութեան ար-
տալայտութիւնը: Սակայն երկրի բանիմաց
անձնաւորութիւնները, մտածող եւ հոգա-
տար մարդիկ պէտք է վերջապէս լուրջ
ուշադրութիւն դարձնեն ներկայ անմիջ-
թար վիճակի վրա եւ միջոցներ որոնեն
թէ եղած հիմնարկութիւնները պահպա-
նելու եւ թէ նորերը բանալու: Դա կարե-
ւոր հոգա է:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

IV

Այս անգամ Երեւանի քաղաքային ընտրու-
թիւնների վերաբերեալ գալիս ենք մի նոր բան
աւելու:

Ընտրութիւնները բեկանվեցին, բեկանվեցին
միանգամայն անսպասելի կերպով: Բայց ինչու,
ինչ հիմունքների վրա:

հաջորդող. Մայիսեան, թէ նոր հրատարակու-
թիւնը անպատճառ նախորդների թերութիւն-
ներից գերեւ եւ մի կատարեալ գործ է լինելու:
Նա անուշաւ կը համաձայնի մեզ հետ, որ դա
մի կամ երկու մարդու, թէկուզ պատրաստված
մարդու կարողութիւնից վեր գործ է, ապա ու-
րեմն ում վրա է ցոյց դնում պ. Մայիսեան,
նա էլ աղակցութեան հրաւեր կարողում, ուր
են այն կարող, ընդունակ ոյժերը, որոնք ձեռն-
հաս են իրանց վրա վերցնել այդպիսի մի խո-
չոր եւ պատասխանատու գործ, որ է հրատա-
րակել յիշուհ. պատմագիրներ, համեմատելով
ձեռագրերը, ուղղագրական փոփոխութիւնները
եւ այլն: Հայագիտութեան մէջ աւելի կամ պա-
կաս ծանօթ անունները աչքի անցնելով չենք
անհետում հրապարակելի զոր զրված խնդրի լը-
րութեանը եւ ծանրութեանը համապատասխան
ոյժեր եւ, տարաբաղդաբար, չենք կարողանում
հաւատալ, թէ այսքան օտարմանաբար ոյժերով
կարելի կը լինի տալ մի համարեա գիտնական
հրատարակութիւն կամ գտնէ մի հարազատ
հրատարակութիւն, նման Ֆրանսիական Collec-
tion des historiens-ին: Եւ որքան մեր հաւատը
մեծ լինի պ. Մայիսեանի անձնական պատ-
րաստակութեան եւ եռանդի վրա, այնու-
ամենայնիւ այդ հոգալ գործը մենակ նրա ոյժե-
րից վեր նկատելու բոլոր պատճառներն ու-
նենք:

Մենք այժմ աւելին կասենք. եթէ մինչեւ իսկ
հնարաւոր լինէր տալ մի իսկապէս գիտնական
հրատարակութիւն մի քանի տասնեակ հազար-
ների զոհաբերութիւնով, մենք այնուամենայնիւ
այժմ հակառակ կը լինէինք այդպիսի ձեռ-
նարկութեան, որովհետեւ, մեր խորին համոզ-
մունքով, ներկայումս աւելի քան երբեք մենք
պարտաւոր ենք ծայրայեղ զգուշաւորութիւն
պարտաւոր ենք ծայրայեղ զգուշաւորութիւն

Ընտրութիւնների ժամանակ տեղի էին ու-
նեցել մի շարք ապօրինութիւններ. այսպէս, օ-
րինակ, մասնակցել եւ ձայն էին տուել բաւա-
կան թւով մարդիկ առանց կանոնաւոր հաւա-
տարմագրերի, մարդիկ, որոնք, գտնվելով քրէա-
կան դատավարութեան տակ, իրաւունք չու-
նէին մասնակցել ընտրութիւններին, նաեւ մար-
դիկ, որոնք ձեռնաչված են անպատճառ, մինչեւ
անգամ մէկը, որը, բացի մասնակցելուց, ընտր-
ված է եղել ձայնաւոր եւ չէ ունեցել բոլորովին
ցենզ. Ահա այս ապօրինութիւնների հիման
վրա ընտրութիւնների գէմ տրվեցին երկու
բաղմաստաբար բողոքներ: Չը նայած այն բա-
նին, որ թուրքերի կողմից էլ եղել էր հակա-
ռակ բովանդակութեամբ մի բողոք, բայց եւ
այնպէս այսօր նահանգական վարչութիւնը,
քննելով այդ բողոքները, վճռեց, այն էլ, առում
են, միաձայն, բեկանել ընտրութիւնները Այս
լուրը մի երկու ժամվայ ընթացքում բերանից
բերան անցնելով տարածվեց քաղաքում: Դա
չառների գէմի վրա խաղում էր ուրախ ժպիտը:
Եւ իսկապէս, այս վճռով մի վայրկեան, մի ժամ
մեր խղճի վրայից կարծէք վերացաւ այն կոչ-
մարը, որ իր ծանրութեան տակ ճնշում էր մեզ
իր բոլոր ոյժով: Այս մեր շար գործը, մեր
տգեղ արարը, որպէս մի ծանր քար ճնշում էր
մեր խղճը, մեր հոգին, մինչեւ որ նահանգա-
կան վարչութիւնը օգնութեան հասաւ մեզ:
Բայց արեւօք մենք ընդմիջաւ ազատվում ենք
այդ կոչմարից: Չէ որ դրութիւնը նոյնն է մնա-
ցել...

Որքան էլ ընտրութիւնները բեկանելու հար-
ցում որպէս հիւր ծառայած լինեն մեր առաջ
բերած ապօրինութիւնները, մենք չենք կաս-
կածում, որ նահանգական վարչութիւնը իր վը-
ճիւղ կայացնելիս ի նկատի ունեցած չը լինի
նաեւ ընտրութիւնների միանգամայն անբաւա-
րար հետեւեալը: Այս ենթադրութիւնը շատ
ընդհանրացած է եւ այլ կերպ լինել չէր էլ կա-
րող: Եթէ մի հատարակութիւն այն աստիճան
առաւ, խղճու-կ, ապիկար գտնվեց, որ հրապա-
րակ եկաւ ինքն իրան միտանալու, իր լաւ ուժե-
րին անպարէզից զջելու եւ մի նահանգական
քաղաք իր բաղմամբ կարիքներով պատահա-
կանութիւններին մատնելու, խօ չէր կարող

եւ անտեսութիւն ցոյց տալ գէպի հասարակա-
կան զոհաբերութիւնները, գէպի հասարակական
էներգիան: Գործելի նիւթապաշտութեան մէջ
մզլած ու քարացած մեր ունեւոր դառն այն-
պիսի դժուարութեամբ է մասնակցութիւն
անձն առնում մի որ եւ է օգտակար հասարա-
կական գործի մէջ, որ նրանից դուրս եկած
իւրաքանչիւր կօպէկը մենք պիտի գործադրենք
միշտ ամենաանխեղաբար, ամենաանհրաժեշտ
ու կենսական կարիքների համար: Եթե անպա-
տասխանութիւնը չըլք հրատարակութիւնը, որը մեզ
կը նստի ոչ 12 հազար, ինչպէս կարծում է պ.
Մայիսեան, այլ երեւի կրկնակի, գուցէ եւ
աւելի, մեր կարծիքով, մի անտեղի եւ ոչնչով
չարդարացող լիւքս է եւ նման է այն աղքատ,
կարօտ մարդու արարողին, որ իր եւ իր զա-
ւակների մեկրութիւնը ծածկելու համար զգեստ
չունի, բայց պէտք է համարում անպատճառ
մատին կրել մի աղամտեղազարդ մատանի, որ
հազարներ արժէ:

Մենք այդպիսի հրատարակութիւնը անպայ-
ման չապրութիւն ենք համարում եւ անհա-
թէ ինչու: Նայա հայ պատմագիրները
մեծ մասամբ զանազան ժամանակներում եւ
զանազան տեղերում հրատարակված կան, շա-
տերը նոյն իսկ մի քանի անգամ. զան-
կացողները, որոնք անուշաւ բաղմամբ չեն եւ
չեն կարող լինել երբեք, միշտ կարող են որ
եւ է կերպով ձեռք բերել, եթէ ոչ ամբողջը,
գէթ մեծ մասը: Գ. Մայիսեանի կարծում է,
թէ կէտը միայն կարելի է գտնել, կարծում եմ,
որ դա փոքրիկ թիրիմացութեան արդիւնք է.
յամենայնիւ գէպ լաւ կը լինէր, թէ նա անուն
անուն ասէր, թէ յատկապէս որ պատմագիրները
իսկապէս ճարել չէ լինում Երկրորդ՝ Վենետիկի
հրատարակութիւններից 20 հաւար 24 թուրքով

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ ԱՌԻՐՈՎ

«Մշակի» երեք համարներում (№№ 240—
241—242) տիրով կարդացինք պ. Ստ. Մայիսե-
անի «Հին դարերից» յօդուածը, որով նա ըստ
արժանւոյն գնահատում է Մեսրոպ-Մայիսեանի
նախնայնութիւնը հայ ժողովրդին եւ լուրջ կեր-
պով բացատրում է տառերի գիւտի խոշոր նշա-
նակութիւնը մեր ազգի պատմական այնքանի
նախնայնութիւնը համար: Անպայման համակրելի է
նաեւ պ. Մայիսեանի յայտնած միտքը՝ յաւեր-
ժացնել որ եւ է նշանակալից, օգտակար դրա-
կան գործով դեռ 15 դար մեզանից առաջ մեր
ազգային կեանքի բարոյական շէնքի հիմքերը
դարձնող մեծ մարդու եւ նրա մեծ գործի յի-
շատակը:

Սաւաւ ենք օտկայն, որ անկարող ենք հա-
մաձայնել պ. Մայիսեանի նոյն նպատակով
արած գործնական առաջարկութեան հետ, որ է
հրատարակել հայ պատմագիրների իրակատար
ժողովածուն: Պատմագիրը հայոց ընդհանուր
խորագրի տակ Այդ առաջարկութեան իրեւ
հիմունք ծառայող պատճառաբանութիւնները
մի փոքր մտախնդր նայենք եւ տեսնենք, թէ
որքան նրանք ըզխում են մեր իրականութեան
հետ կապված անհրաժեշտութիւնից եւ թէ որ
չափով այդ առաջարկութեան իրադրութեամբ մեզ
պիտի մօտենցնէ Մեսրոպ-Մայիսեանի մեծ իղէ-
մին—հայ ժողովրդի ամբողջութիւնը աւելի
օրաւ կապով կապված տեսնել մայրենի լեզուի
եւ ազգային գրականութեան հետ:

կարող է լուծվել միայն բեֆորմներ մտնելով, որոնք հնարավոր կը դառնան միայն այն ժամանակ, երբ կանխատեսված կառավարները բոլորովին ղեկավարվեն:

ԲԷԼՐԱՆԻ Սկուպչիկայի նիստերը յետագայում են:

ԿԱՐՍ. Յոթերեկական հանդեսներին եկած պատգամաւորութիւնները ներկայ էին ամբողջապէս գնդի զօրանոցների օրհնութեանը եւ հոգեհանգստին 1877 թ.ի պատերազմում օգնողների արձանի մօտ: Զինուորական ժողովարանում առաջարկված է նախաճաշ Միտք ծագեց յաւերժացնել ներկայ անցըր պատանաւորանի կառուցմամբ օգիցներին արդիների եւ որդիների համար: Երեկոյեան տեղի ունեցաւ մեծ պարահանդէս:

ՊՐԵՏՈՐԻԱ. Տրանսվալում վերացված է պաշարման գրութիւնը: Բնակութիւն հաստատելու թույլտւութիւններ կը տրվեն բոլորներին, հպատակութեան երդում տալու պայմանով:

Պետական - աշխուժական - կալուածական բանկի փոխառութեան խաղարկութեան տոմսերի 26-դ տիրածը (նոյեմբերի 1-ի):

№2 սերիաների. 12327, 13408, 6698, 11503, 15653, 11636, 3383, 2061, 3628, 3813, 647, 9463, 14223, 3570, 9851, 13095, 128, 967, 11313, 7491, 1436, 4115, 1356, 15824, 13711, 2110, 3013, 11721, 13036, 2202, 2006, 10479, 8120, 13274, 5172, 4878, 5075, 2874, 10882, 4598, 4125, 5862, 7212, 8457, 12949, 10458, 463, 3771, 13705, 8760, 7348, 13714, 12360, 2820, 13182, 15528, 15226, 1977, 1184, 8915, 1349, 10618, 12833, 10659, 12271, 12282, 15209, 1861, 520 7985, 8215, 11025, 539, 6186, 14750, 14457, 15847, 4446, 6947, 12495, 14374, 1054, 2593, 3350, 1051, 3233, 5668, 15605, 14998, 14023, 12234, 3577, 5383, 4569, 3111, 7015, 4672, 124, 3520, 15609, 26, 12154, 12433, 15903, 7098, 7395, 8658, 9215, 13112, 1300, 10572, 5549, 15278, 7454, 11133, 9960, 12563, 2427, 5217, 11892, 12885, 8433, 2492, 12211, 1091, 4805, 7289, 8851, 7386, 10854, 11342, 14673, 149, 7000, 2676, 635, 15289, 11879, 3767, 4609, 1142, 13250, 10841, 3556, 4700, 2614, 10025, 4727, 4160, 922, 15060, 6179, 13709, 7358, 14715, 10566, 10361, 7178, 9186, 2290, 15529, 9018, 790, 11262, 15344, 15276, 6638, 8360, 14206, 14273, 6873, 7272, 7819, 11995, 9317, 445, 7378, 1497, 6634, 994, 5839, 7516, 14214, 2130, 12179, 13396, 7193, 1982, 32, 10001, 11891, 8413, 10431, 14541, 15490, 5257, 2509, 2319, 9856, 9820, 2750, 7284, 8586, 9609, 7950, 14540, 11479, 563, 14714, 983, 12171, 12516, 1693, 5320, 711, 3621, 1401, 7812, 6782, 636, 4781, 9568, 7661, 5139, 15748, 10465, 14040, 3057, 14523, 4408, 6708, 9744, 15049, 5123, 8350, 3004.
--

Խորագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱՄԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՐԻԶԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍՏԱՆԱ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅՈՒՐԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ԲՈՒԺԱՍՏԵՆԵԱԿ
ԴՕԿՏՈՐ Վ. ԱՐԾՐՈՒՆՈՒ
մասնաւորապէս
ԲՅՈՒ, ԲՔԻ, ԱՅԼԱԶԻ ԵՒ ԿՐԾՔԻ ՀԻԱՆԴՈՒ-
ԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ
Сергиевская ул., д. 12.

ՄԻ ՀԱՅ ՏԻՒՆ
որ աւարտել է Թիֆլիսի իգական գիմնազիան
եւ ժընէվի համալսարանը, ցանկանում է դա-
սեր ունենալ առարկաներից, որոնք են
գլխաւորապէս ֆիզիոսերէն լեզուներից:
Դիմել առաւօտեան ժամի 10-4-ը՝ Велями-
новская ул., д. Лорисъ Меликова, № 19.
1-10

ԲՈՒՇԿ Ս. Պ. ՎՕՅԼՊԷ
Հնդուում է վեներաբլան, Սիմիլիս, ՄՈՐ-
ԹԵՆԻ եւ ՆԵՐՔԻՆ հիւանդութիւններ ունեցող-
ներին: Առաւօտեան 8 1/2-12 ժ., երեկոյեան
4-7 ժ.: Հոգեկէ՛ն՝ Սրեւանեան հրապարակ, տ.
Գորգենայի, № 2: 8-10

ԲՈՒՇԿ Ս. Պ. ՎՕՅԼՊԷ
Հնդուում է վեներաբլան, Սիմիլիս, ՄՈՐ-
ԹԵՆԻ եւ ՆԵՐՔԻՆ հիւանդութիւններ ունեցող-
ներին: Առաւօտեան 8 1/2-12 ժ., երեկոյեան
4-7 ժ.: Հոգեկէ՛ն՝ Սրեւանեան հրապարակ, տ.
Գորգենայի, № 2: 8-10

ԹԻՖԼԻՍԻ ԱՋՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԲԱՏՐՈՆ
Տէլեֆոն № 617
Այսօր, շաբաթ, նոյեմբերի 9-ին, Խարկովի
ռուսաց օպերային արտիստները, պ. ԲՐՈՋԻ-
ՍՈՒՏԻՆԻ-ի մասնակցութեամբ, կը ներկայացնեն
Տ Ր Ո Ւ Բ Ս Դ Ո Ւ Ր

Օպերա 4 գործ. եւ 8 պատկ. երաժշտութիւն
ՎԷՐԴԻ
Մ ա ն ա կ ց ու մ են՝ ա.ա.ա. Զօրինա, Կարամ-
զինա-ժուկովսկայա, Սկորոպովսկայա, պ. պ.
Վասիլիեւ, Բրոյն-Մուսիլ, Պետրով, Պէլցով,
Սկորոպով եւ այլն:

Կապիւլէյաւէր՝ Շտէյնբէրգ
Սկիզբը երեկոյեան ժամի 8-ին:

Վաղը, կիրակի, նոյեմբերի 10-ին, մասնակցու-
թեամբ յայտնի գերասանուհի Մ. Ն. ԻՆՍԱ-
ՐՕՎԱՅԻ եւ Ա. Պ. ԲՕՆԱՅԻԶԻ կը ներկայացնեն
Վ Կ ա Ր Վ Ե ն ա Կ արմէնի գերը կը կատարէ Մ.
Ն. ԻՆՍԱՐՕՎԱ, Դօն խօզի գերը՝ Ա. Պ. ԲՕ-
ՆԱՅԻԶ:

Երկուշաբթի, նոյեմբերի 11-ին, Ա. Պ. Բօնա-
յիչի եւ պ. Ամալիայի մասնակցութեամբ, ԲԷ-
ժիսօր Ա. Դ. Բէլսկու. բէնէֆիսին, կը ներկա-
յացնեն ՎԵՐԴԱՆԻՍԻ Բարձուն՝ Բրոյն ներկայաց-
ման համար տոմսակները ծախվում են:

ԽՈՒՄԱՐ ԿԸ ՄՆԱՅ ՄԻԱՅՆ ՄԻԱՅՆԻ
ՆՈՅՆՄԱՐԻ 15-Ը
1-1 Գլխաւոր բէժիսօր Ի. Փիթօւեյ

Արժանաւոր № 5
ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԲԱՏՐՈՆ
Երկուշաբթի, նոյեմբերի 11-ին
ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՆԻԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՒՄԱՐ

Կը ներկայացնէ
I
Օ Տ Ա Ր Ն Ե Ր
Կամէդիա 4 գործ. Պատանկուի, Թարգմ. Տեր-
Դէրգեանի
II
ՄԻՐԱՀԱՐԸ ՍԵՂԱՆԻ ՏԱԿ
Վաղըվի 1 գործ., հնդ. պ. Բամայանի
Մասնակցում է ամբողջ խումբը
Սկիզբն է 8 ժամին երեկոյեան:

Շուտով կը կայանայ պ. Պետրոսեանի բէ-
նէֆիսը:
1-2 Բէժիսօր Յ. Արեւան

ՏՅԱԳՐՎՈՒՄ Է ԵՒ ԴԵԿՏԵՐԱՐԵՐԻ 19-ԻՆ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍԷ
Լ Է Օ
Գ Ր Ի Գ Ո Ր Ա Ր Ծ Ր Ո Ւ Ն Ի
Ա ա ջ ի ն հ ա տ ո Ր
(մօտ 460-480 երես, 15 պատկերով)

Ամբողջ գործը, որ գրական-կենսագրական մի մանրամասն տեսութիւն է, բաղկացած կը լինի
ԵՐԵՎԱՆԻ հատորից, իւրաքանչիւրը մօտ 500 երես, զարդարված ԲԱՋՄԱԹԻԻ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ (կը
լինեն «Մշակի» աչքի ընկնող աշխատանքների պատկերները):

Ա ա ջ ի ն հ ա տ ո Ր ի խաղաղութիւն է երկու մասից. I) Արժանիքների տոմար. II) Գրեգոր
Արժանիքն ունենողական տարիները (գրական գործունէութիւն մինչեւ «Մշակը»): Ե Ր Կ Ր Ո Ր
եւ երրորդ հատորները նուիրված են «Մշակի» շրջանին երկրորդ հատորը լոյս կը տեսնէ
1903 թ. փետրվարին:

Մաքուր տպագրութիւն, լուս. թղթի վրա: Գրքի չափը 16 սմ. 1/2 է Վեներաբլի Միլիթա-
րեան տպարանում եւ ներկայացնում է յատուկ պատկերով զուգարար նկար:

Բ Ա Ց Վ Ա Մ Է Բ Ա Ց Ա Ն Կ Ր Դ Ո Ւ Թ Ի Ն
Բաժանորդագիրն է երեք հատորի համար ԵՐԵՎԱՆԻ ՐՈՒՄԻ, ճանապարհածախով 2000
րուբլի: Կարելի է վճարել եւ մաս-մաս, այն է. 2 ռուբլի բաժանորդ գրվելու, իսկ մնացածը
երկրորդ հատորը լոյս տեսնելուց յետոյ:

Կամենայով հեարաւորութիւն տալ ցանկացողներին ունենալ գրքերը ԿԱՋՄԱՐԻ մէջ, մինչ
առաջարկում ենք ԳԵՂԵՑԻ, ՃԱՇԱԿԱՆՈՐ Կազմեր Գինը նշանակում ենք առանց մեր կողմից
որ եւ է յաւելում, այն է ՄԻ ՐՈՒՄԻ երեք կազմի համար Դրաի քաղաքներից կազմած օր-
նակներին բաժանորդ գրվողները պէտք է աւելացնեն ճանապարհածախս 20 կոպէկ՝ պոստային
փաթեթի համար:

Հատորները տաճնին-տաճնին չեն ծախվի: Բոլոր երեք հատորները լոյս տեսնելուց յե-
տոյ, գիրք կը բաժանարարվի Վերադիր վճարով բաժանորդագիրն չէ ընդունվում:
Թիֆլիսում բաժանորդ գրվել կարելի է. 1) Հեղինակի մօտ, «Մշակի» խմբագրատանը եւ
2) «Գուգուսները» գրադատարանում, Լօրիս-Մէլիքեան փողոց:

Օտար քաղաքները զիմում են. Тифлисъ, Редакция «Мшакъ»:

Ք Ի Մ Ի Ա Կ Ա Ն Լ Ա Բ Օ Ր Ա Տ Օ Ր Ի Ա
ԳԻՄԻԱՅՈՍ Ա. ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ԵՒ ԲԱՄԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԴՕԿՏՈՐ Կ. ԽՕՋԱՅԵԱՆԻ

Թիֆլիս, Ուկրէյնների փողոց, տ. № 27:
Հնդուում է ամեն տեսակ տեխնիկական օգնական, հաշիւային արհեստական, հաշիւային
չինարարական, գիւղատնտեսական, անասնաբուժական-առողջապահական եւ քիմիկո-ֆիզիոլոգի-
կան հետազոտութիւնների համար իւզեր (ռուսական, միներալական), նաւթ, ապակի, ներկեր,
մետաղ, հանքեր, մետաղներ, հանքային ջրեր, ցէմէնտ, կիր, հող, պարարտացման նիւթեր,
կաթ, իւղեր, պանիր, գինի, գարեջուր, շաքար, ալիւր, կոնսերւներ եւ այլն: Տեխնիկական տե-
ղեկութիւններ եւ խորհուրդներ: Գործնական նախագաղապարութիւն լաբորանտների գործա-
րանքներ եւ հանքերի համար Աշխատանքի տեղեր կան եւ պ.պ. Ուսանողների համար: 4-6

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
Լ Ա Բ Օ Ր Ա Տ Օ Ր Ի Ա
Գ. ՓԱՍՏՐՄԱՃԵԱՆԻ

ԴՕԿՏՈՐ ԳԻՄԻԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ
Գիմիական անալիզներ (որակական եւ քանակական) ամեն տեսակ նիւթերի՝ հանքեր, հանքային
ջրեր, գիւղատնտեսական նիւթեր եւ այլն եւ այլն:
Տեխնիկական փորձեր եւ խորհուրդներ:

Դիմել՝ Тифлисъ, Кавказская Центральная Лаборатория Доктору химии Г. Пастер-
малжиянъ, Вельяминовская ул., д. Лорисъ-Меликова, № 19.

24-26

ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐԻ

ԵՒ ՐԵՏԻՆԻ ՈՒՐԻՇ ԻՐԵՂԵՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՊԱՐԳԵՒԻ (GRAND-PRIX)

Պարիզի ցուցահանդէսում տրված է Ռուսաստանից ՄԻՄԻԱՅՆ

ՐԵՏԻՆԻ ՄԱՆՈՒՅԱԿՏՈՒՐԱՅԻ ՌՈՒՄ-ԱՄԵՐԻԿԱԿԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՄ

որ հիմնված է 1860 թվականին

Խնդրում են Ր Ե Տ Ի Ն Ի Կ Ր Կ Ն Ա Կ Օ Շ Ի Կ Ն Ե Ր գնելու ուղարկութիւն դարձնել կրօնկների հետեւեալ կնիքի վրա

Մանաւանդ ընկերութեան հիմնարկութեան «1860» թվականի եւ «Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ», խոցերի վրա՝ կարմիր եւսմ -
կիւնու մէջ (գործարանի կնիքը):

Մ Ե Ն Գ Ա Ն Ա Կ Ո Ւ Թ Ե Ա Մ Բ Ե Ա Ն Ս Կ Ա Տ Ա Ր Ա Մ Է

»Լ Է Օ Պ Օ Լ Դ Ն Է Յ Ե Լ Է Ր«

առեւտրական տունը

Ս. Պետրոբուրգում, Մոսկովում, Բրազուում, Օդեսայում, ՐՕՏՏՈՎՈՒՄ ԴՕՆԻ ՎՐԱ ԵՒ ԽԱՐԿՈՎՈՒՄ

5-55

Довлечено Цензурою, Тифлисъ, 7 Ноября 1902 г. Զлохотропчатая Груз. Издат. Т—ва, В. Ванкская ул.